ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐԿՈՒՄԸ ԵՒ/ԿԱՄ ՁՈՒԼՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ (1920-2000ԱԿԱՆՆԵՐ)

(Ակնարկ)

ՎԵՐ. ՌԸՆԷ ԼԵՒՈՆԵԱՆ
rene.leonian@gmail.com

Հայերը զանգուածային կերպով սկսեցին գաղթել Ֆրանսիա 1923ից: Նրանք գալիս էին հայկական նախկին տարածքներից եւ Օսմանեան Կայսրութեան այն վայրերից, որտեղ աւելի վաղ հաստատուել էին (մեծամասնութիւնը Կիլիկիայից եւ ոչ միայն):

Ցեղասպանությունից յետոյ հայերի որոշ մասը Ֆրանսիա տեղափոխուելուց յետոյ հաստատուեց այն քաղաքներում եւ գիւղերում, որտեղ կարող էին աշխատանք գտնել: Օրինակ՝ Մարսէյ, Վալանս, Լիոն եւ Փարիզի շրջան:

1923-2010՝ Ֆրանսայի մէջ ապրեցան ու կենսագործեցին հայ հինգ սերունդներ: Ստորեւ կը ներկայացնենք անոնց իւրաքանչիւրին ինքնութենական համառօտ ընդհանրական դիմանկարը եւ իւրայատկութիւնները: Բնական է, կատարուածը համընդգրկուն չի կրնար ըլլալ (նկատի առնելով բացառութիւնները), բայց ինչպէս ըսինք՝ ան ընդհանրացման ուժ ունի:

Ա.- ԱՌԱՋԻՆ ՍԵՐՈՒՆԴ. ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հայերի մեծ մասը Ֆրանսիա գաղթեց հիմնականում ընտանիքներով, կային նաեւ անհատներ, ովքեր սկզբում մէնակ եկան աշխատանքի եւ բնակութեան վայրի հարցերը լուծելու, յետոյ արդէն բերելու իրենց ընտանիքներին: Լիբանանում եւ Սիրիայում ապաստանած հայերի մի մասը՝ արհեստաւորներ եւ տարբեր մասնագէտներ, տեղում արդէն կարողացել էին ֆրանսիական կառավարութեան որոշ պաշտօնեաների միջոցով (այդ ժամանակ Սիրիան եւ Լիբանանը գտնւում էին Ֆրասիական հոգատարութեան ներքոյ) ապահովել աշխատանքային տեղեր, կեցութեան պայմաններ եւ յետոյ տեղափոխուել:

Առաջին սերունդը չգիտէր կամ շատ քիչ գիտէր ֆրանսերէն, փորձում էր մտքից ջնջել կոտորածների մղձաւանջը: Ջնջել, բայց ոչ մոռանալ: Դա ցմահ խարանուած սերունդ էր, որի ներքին տառապանքը կրկնապատկւում էր ապրելու անյագ ծարաւով:

Ժամանելով Ֆրանսիա հայերը ձգտում էին՝ լինել խոհեմ, աստիճանաբար հարմարկուել նոր կենսապայմաններին եւ բարի դրացիական յարաբերութիւններ ունենալ հիւրընկալող երկրի բնակիչների հետ:

Նրանց համայնքային կեանքը աստիճանաբար զարգանում էր, եւ դա առաջացնում էր ապահովութեան զգացում: Կառուցուեցին եկեղեցիներ, կրթական եւ մշակութային կենտրոններ, սկսեցին հրատարակուել թերթեր, ստեղծուեցին հայկական կուսակցական առաջնային կազմակերպութիւններ... այս բոլորը նպաստեցին հայկական գաղութի կեանքի աշխուժացմանը:

1930ականներին քրտնաջան աշխատանքի շնորհիւ հայ համայնքը մեծ առաջընթաց ունեցաւ, սակայն ն ոյն շրջանին Ֆրանսիայում տեղի ունեցաւ տնտեսական ճգնաժամ եւ աշխատատեղերի կրճատում:

Հայերը տուժեցին 1932 Օգոստոսի 10ի «Օտարերկրեայ Աշխատողների Թուակազմի Հաստատման Մասին» օրէնքից, ըստ որի արտասահմանցիների միայն 10 տոկոսը կարող էր աշխատել Ֆրանսայի արդիւնաբերական ձեռնարկութիւններում: Դա իհարկէ հարուած էր: Սակայն տառապանքը իսկական յաջողութեան վերածուեց որոշ մարդկանց համար, ովքեր «նետուեցին» շուկաներում սնունդ եւ հագուստ վաճառելու, որպէսզի իվերջոյ յաջողութեան հասնեն կրպակային-փերեզակային առեւտրում:

Սա այն պարկեշտ սերունդն էր, որն իր դժբախտութիւնը թաքցնում էր իր մէջ ու չէր հաղորդում նրանց, ովքեր հայ չէին: Նա վախենում էր բացուել դէպի արտաքին միջավայր, քանի որ օտար լինելու *միֆը* ջլատում էր նրան: Նա նախանձախնդիր էր իր կենսապայմանների նկատմամբ՝ ընտանիք, խոհանոց, սովորոյթներ, մշակութային աւանդոյթներ, բանահիւսութիւն, եկեղեցի: *Կեթթոյի* իր կեանքը՝ առանձնացած ապրելը նրան չէր խանգարում: Այդ սերնդի աշխարհագրական (տարածքային) համախմբուածութիւնը եւ այցելութիւնները՝ համերկրացիներին, նրան զերծ էին պահում ձուլման գայթակղութիւնից ու վտանգից:

Բ.- ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ. ԵՐԿՈՒ ՄՇԱԿՈՅԹՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Նրանք ծնուեցին Ֆրանսիայում, կամ 1923ին ժամանելիս ընդամէնը մի քանի տարեկան էին: Դա մի սերունդ էր, որը բացառապէս ապրում էր երկու մշակոյթների միջեւ: Որպէս կանոն նրանց ծնողները կրթութիւն գրեթէ չունէին, որը էին եւ ֆրանսերէն լաւ չգիտէին: Տանը նրանք խօսում էին հայերէն եւ երբեմն՝ թուրքերէն, իսկ դպրոցում՝ ֆրանսերէնն էր: Շատերը բաւականին ուշ ընդունուեցին դպրոց: Իհարկէ, նրանք պէտք է նախ յաջողութեան հասնէին: Այդ պահից սկսած ոչինչ հեշտ չէր նրանց համար: Նրանք սերունդների, մտածելակերպի, բարքերի բախման մէջ էին: Նրանց համար կրկնակի մշակոյթի խնդիր կար.-

Մի կողմից՝ ընտանիքից փոխանցուող արեւելեան մշակոյթ, բարքեր, բարոյականութիւն, մտածելակերպ, ընտանեկան կեանք, միւս կողմից՝ հիմնականում դպրոցի կողմից փոխանցուող արեւմտեան մշակոյթ:

Երկու մշակոյթների միջեւ մեծացող անհատը անպայման պէտք է ունենար կողմնորոշման դժուարութիւններ, սակայն ի պատիւ մեր հայրենա-

կիցների՝ նրանց մեծ մասը պահպանեց իր ինքնութիւնը շնորհիւ ընտանեկան աւանդական սովորոյթների, միջհամայնքային կեանքի զարգացման, հայկական հոգեւոր եւ մշակութային արժէքների հետ մշտական հաղորդակցութեան:

Գ.- ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ. ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՆՈՒՄ

Երրորդ սերունդը ցանկանում էր յաջողութեան հասնել իրեն եւ այլոց համոզելու համար, որն ինքն աւելի լաւ է համարկուել: Ոմանք լուծում էին, խառնւում ֆրանսիական հասարակութեան մէջ: Շատերի համար ոչ-հայի հետ ամուսնութիւնն օգնում էր մեղմել մշակութային տարբերութիւնները, երբեմն հեռացնում հայկական միջավայրից, սակայն բոլորն էլ այս կամ այն չափով պահպանում էին իրենց հայ լինելը: Ցաւօք, կային անհատներ որոնք լիովին հեռանում էին հայկական արմատներից: Այդ սերունդը ծնուել էր 1950ականներին՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմից յետոյ: Ծնուել էր Ֆրանսիայում՝ հայկական ծագումով ֆրանսիացի ծնողներից: Շատերը խառն ամուսնութիւններից էին ծնուել: Այդ սերնդի հիմնական մշակոյթը ֆրանսիականն էր: Ընկերաբանական առումով, նրանք շատ տարբերակուած մասնագիտութիւններ ունէին՝ ազատ գործի ասպարէզի մարդիկ, վարչակալական կամ վարչատարական պաշտօնեաներ, մասնագիտացած արհեստաւորներ, տնօրէններ, ուսուցիչներ: Այս սերունդը ֆրանսիացիներից ցածր լինելու զգացողութիւն չունէր:

Նախորդ սերունդն արդէն բարձր էր պահել հայ մարդու հեղինակութիւնը, վարկը յաչս տեղաբնիկների, այնպէս որ օտար երկրներում գաղթական հայերը ոչ մի վտանգ չէին ներկայացնում այդ երկրների համար, այլեւ այդ երկրների օգտակար եւ հաւատարիմ մասն էին կազմում: Այդ հայ գաղթականները հիւրընկալ երկրներին տուեցին բարի ու նուիրեալ քաղաքացիներ, տաղանդաւոր մարդիկ, ականաւոր անհատներ մարդկային կենսագործունէութեան բոլոր ճիւղերում եւ բնագաւառներում:

Այս սերունդը օգտակար էր՝ իհարկէ, բայց նաեւ հաւատարիմ էր պայմանով, որ կարողանար պահպանել եւ զարգացնել իր սեփական մշակութային հարուստ ժառանգութիւնը:

Այս երրորդ սերունդը քիչ գիտէր, վատ գիտէր կամ ընդհանրապէս չգիտէր հայերէն: Միշտ չէ, որ ուղիղ կապ ունէր իր ինքնութեան հետ: Եւ այնուամենայնիւ, սա երիտասարդների միաժամանակ զարմանալիօրէն հանգիստ հաւասարակշռուած ու վճռական սերունդ էր: Ոմանք պատրաստ էին ամէն ինչի: Դա հայկական զինուած պայքարի սերունդն էր (ձուլուած իրական դիմադրութեանը): Նրա համար ամբողջ աշխարհում եւ իհարկէ Ֆրանսիայում, հայկական անհատականութիւնը վերացնելու հարցը օրակարգից դուրս էր: Բոլոր բարդոյթներից ազատուած հենց այս երրորդ սերունդն էր, որ կարողացաւ համարկուել երկրի կեանքում՝ բազում մակարդակներով, սակայն միաժամանակ պայքարելով ընդդէմ ձուլման:

Դ.- ՉՈՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ

Այս սերունդը ծնուել է 1975ականներից սկսած եւ դրանից յետոյ: Նա ծնուել է հենց այն ժամանակ, երբ սկսուեցին առաջին մահափորձերը թուրք դիւանագէտների դէմ: Յամենայնդէպս, այս սերունդը օգուտ քաղեց նախորդ սերունդների աշխատանքից, նրանց իրականացրած գործողութիւնների բոլոր ձեւերից՝ ժամանակաւոր նահանջ, դիւանագիտական քայլեր, ինքնահաստատուելու ցանկութիւն, բռնութեան կիրառում...:

Այս չորրորդ սերունդը հեռուից ականատեսն էր եղել նաեւ Հայաստանում կատարուող մի շարք կարեւոր իրադարձութիւնների. 1988ի Դեկտեմբերի 7ի երկրաշարժ, 1991ին Հայաստանի անկախութիւն, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքի ազատագրական պատերազմ: Այս ժամանակահատուածում էր, որ Սփիւռքը կարողացաւ է՛լ աւելի համախմբուել, հաստատուն կապեր ստեղծել Հայաստանի հետ... իսկ Հայաստանի անկախութիւնն ու ղարաբաղեան պատերազմում տարած յաղթանակները զոհի, խեղճի բարդոյթը փոխարինեցին հպարտութեան զգացումով, եւ աշխարհի բոլոր հայերը մեծ վստահութեամբ լցուեցին Հայրենիքի հանդէպ, եւ ձգտում առաջացաւ առաւելագոյնն անել Հայրենիքի համար՝ հասարակական կեանքի բոլոր բնագաւառներում կայունութիւն ապահովելու:

Ե.- ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ

Նա ծնուել է 2000ականներին եւ դրանից յետոյ: 2001ին Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչեց 1915 թուականի Հայոց Ցեղասպանութիւնը:

Այս հինգերորդ սերնդի համար հայկականութիւնը ոչ միայն նախորդ սերունդների պայքարն է, այլ նաեւ անկախ ՀՀի գոյութեան փաստն է, որի հետ կապերն ու յարաբերութիւնները օրէցօր ամրապնդւում են: Ինչպիսի՞ դիրք կը բռնի այս 5րդ սերունդը՝ կեանքը, ապագան ցոյց կը տայ: Բայց կարող ենք յոյսով լի լինել ապագայի նկատմամբ:

Այս սերունդը լաւագոյնս տիրապետում է տեղեկատուական արհեստագիտութիւններին, եւ սա նոր մշակոյթ է, որն օգնում է հետեւել ՀՀում տեղի ունեցող բոլոր իրադարձութիւններին, անմիջական կապեր հաստատել ՀՀի եւ Սփիւռքի այլ երկրների հայերի հետ: Նրանք թէպէտ ֆիզիքապէս ՀՀում չեն ապրում, սակայն ընդհանուր հայրենիքի գաղափարը միասնականացնում է նրանց, ինչն էլ օգնում է ներգրաւուել հայաստանեան խնդիրներին եւ օգտակար լինել հայրենակիցներին:

ՀԱՄԱՐԿՄԱՆ ԵՒ ՁՈՒԼՄԱՆ ԻՄ ՏԵՂԱՅՆԱՑՈՒԱԾ ՄՕՏԵՑՈՒՄՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Մեկնելով իմ ապրած փորձառութիւնից, մանաւանդ ֆրանսիական իմ կենսագործունէութիւնից, ստորեւ կը ներկայացնեմ իմ դիրքորոշումը, հասկացութիւնը եւ ընկալումը համարկման եւ ձուլման գաղափարների վերաբերեալ:

ա) Համարկում

Մէկ էթնիկ փոքրամասնութեան համարկումը, ինչպիսին հայերինն էր, Ֆրանսիայում տեղի ունեցաւ միքանի փուլով.-

- նոր երկիր տեղափոխուելը, շփումներ եւ հաղորդակցութիւն հաստատելը՝ ա) ֆրանսիական տարածքի հետ, բ) Ֆրանսիայում ապրող բնակչութեան հետ (ֆրանսիացիներ եւ ոչ-ֆրանսիացիներ), գ) գոյատեւման խնդիրների հետ (աշխատանք, կացարան):

Այդ պահից սկսած, շատերի համար պարզ էր, որ նրանց հայրենադարձութիւնը հաւանաբար երկար կը տեւէր՝ չնայած ոմանք յոյս ունէին, որ հայկական տարածքների ապագան եւ իրենց հաւանական վերադարձի հարցերը շուտափոյթ լուծում կը ստանային: Ուստի նրանք հոգում էին ամենահրատապի մասին. ապրելու տեղ գտնել, աշխատել, սնուել:

Հայերի համար համարկումը մի կողմից նշանակում էր մեծ յարգանք Ֆրանսիայի նկատմամբ, բայց նաեւ իրենց աւանդական արժէքների՝ եկեղեցու, լեզուի, մշակոյթի, բանահիւսութեան պահպանման կարիք:

Այսպիսով, հայերի համար «համարկուել Ֆրանսիայում» - իմ պատկերացմամբ - նշանակում է հետաքրքրուել հիւրընկալ երկրի արժէքներով՝ բոլոր ոլորտներում, եւ ընդունել դրանք այնպէս, որ դրանք հայերի համար օտար չլինեն, այնպէս՝ կարծես թէ միշտ հայերինն են եղել, կարծես թէ հայերի էութեան, անձի մասն են կազմում: Որոշ առումով, ստիպուած, բայց բնականօրէն պատկերացնել, որ հայերին՝ դա ուղղակիօրէն հայերին է վերաբերում, նախնիները՝ գալիացիներն են, նոյնիսկ, եթէ գիտեմ, որ իրականում իմ նախնիներն այլ էին:

Համարկուել նշանակում է յաղթահարել վերապրելու, գոյատեւելու խնդիրները, աստիճանաբար տեղաւորուել բոլոր մակարդակներում: Իրեն յարմարաւէտ զգալ՝ մոռանալով սկզբնական դժուարութիւնները (նսեմացում, թերարժէքութեան բարդոյթ, տարբերութիւններ ...):

Հաշուի առնելով նախորդ նկատառումները՝ կարող ենք ասել, որ հայերը Ֆրանսիայում են եւ լաւ են համարկուել: Փաստօրէն, նրանք ոչ միայն յաղթահարել են վերապրելու խնդիրները, այլեւ նրանց յաջողուել է ներկայ լինել հիւրընկալ երկրի բոլոր կառոյցներում. տնտեսապէս՝ արդիւնաբերութեան եւ առեւտրի բոլոր ճեւերում, ընկերային առումով՝ գործունէութեան բոլոր բնագաւառներում (բժշկական, հանրային եւ մշակութային), քաղաքականապէս՝ սկսելով «տեղաւորուել», գործընկերների վրայ «յոյս դնելու» փոխարէն: Քաղաքական հարթակը բացայայտում է, թէ հայն ինչ աստիճանի հետաքրքրութիւն է ցուցաբերում իր երկրի՝ Ֆրանսիայի, նկատմամբ, իսկ Ֆրանսիան՝ հակառակը, վստահութիւն է նրան ներշնչում: Այսպիսով, հայերի համարկումը Ֆրանսիայում ընդհանուր առմամբ յանգում է օրինակելի յաջողութեան:

բ) Ձուլում

Այս առումով, համարկում չի նշանակում ձուլում, այսինքն՝ կլանում:

Ֆրանսիայում հայերի նոր սերունդների կարգախօսը լաւագոյնս կարող է ամփոփուել հետեւեալ բանաձեւում՝ «համարկում՝ այո, ձուլում՝ ոչ»:

Իհարկէ որոշ հայեր այլեւս չեն ցանկանում լսել իրենց ծագման մասին: Նրանց համար դա անցեալի փակուած էջ է. այսուհետեւ նրանք ֆրանսիացի են, նրանք իրենցից հեռացնում են հայերի հետ կապուած ամեն ինչ: Պաշտօնապէս նրանք մոռացել են ամեն ինչ եւ այլեւս ոչինչ չեն յիշում: Որոշ առումով դա նրանց այլեւս չի հետաքրքրում: Ամենակարեւորը նրանց համար ներկան ու ապագան են, կարեւորը ֆրանսիացի լինելն է: Իրենց համարկումը իրենց բաւարար չէ, պէտք է նոյնիսկ ջնջել ֆրանսիական իրական եւ իրենց ծանր կեանքի միջեւ եղած ցանկացած տարբերութիւն կամ անհերդաշնակութիւն եւ, իսկապէս ֆրանսիացի լինելու համար, լուծումը ձուլման գործընթաց սկսելն է:

Այնուամենայնիւ, ֆրանսիահայերի մեծամասնութիւնը դրականօրէն չի ընկալում ձուլման գայթակղիչ կոչը: Նրանք դա տեսնում են որպէս կործանարար երեւոյթ, որը հանգիստ, բայց հաստատ կերպով ջլատում է անհատներին, համայնքներին եւ հաւանական էթնիկ փոքրամասնութիւններին:

Ֆրանսիայի հայերի համար ձուլումը կը յանգեցնէր իր ողջ անցեալի, մշակութային ժառանգութեան, աւանդոյթների մոռացմանը, եթէ ոչ ամբողջական անհետացմանը: Լաւագոյն դէպքում, այն կը սահմանափակէր հայկական ինքնութիւնն ու էութիւնը իր միակ բանահիւսական արտայայտութեամբ՝ զրկելով իր ծագման հարստութեան հետ որեւէ կապից եւ պահանջատիրական իրաւունքից: Սա վատագոյն խիզախումը կը լինէր նրանց համար՝ ստիպելով լռել, զիջել, հրաժարուել, որպէսզի քուն մտնեն ու մեռնեն բնական մահով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆրանսահայ առաջին սերունդը ներամփոփ վարք էր ցուցաբերում: 2րդ սերունդը փորձում էր յարմարուել տեղի պայմաններին: 3րդ սերունդն աւելի ուշադիր էր ինքնութեան խնդրին: Այնուամենայնիւ, նկատելի էր ճեղքուածք՝ 3րդ սերնդի անտարբեր մասի (որը ձուլման ճանապարհին էր) եւ մարտնչող թեւի միջեւ: Կարելի է մերժել ձուլումը՝ չյայտնուելով հասարակութիւնից դուրս վիճակում: Համարկումը իր հետ չի բերում պարտադիր ձուլում: Այն չի հակասում ձուլմանը: Այլ՝ անդրադառնում է ինքնութեան խնդրին (մէկ ուրիշի կերպարը, կաղապարը), որտեղից էլ գալիս է ծնողների, լեզուի, օրինակ ծառայող վկաների, փոխանակումների կանոնների, ուրիշների մասին պատերացումների դերը: Դէմ յանդիման սեփական մշակոյթին՝ Ֆրանսիայում հայերի սերունդները շփում էին գերիշխող մշակոյթի հետ:

Այստեղից էլ մեկուսացումը եւ միաժամանակ որոշակի մասնատումը, երբ կար երկու մշակոյթների փոխադարձ ներդրումը եւ դրանք միմեանց հակադրելը, որն էլ յանգեցնում էր մշակութային կապերի ստեղծմանն ու փոխանակումներին:

THE INTEGRATION/ASSIMILATION OF ARMENIANS IN FRANCE
(1920S-2000S)
(Summary)

REV. RENÉ LÉONIAN
rene.leonian@gmail.com

After the Armenian Genocide at the start of the twentieth century, Armenians dispersed across the world. They settled in France from 1923. This presentation studies the five generations of Armenians who have followed one after the other in France since that date.

Each of these five generations has faced the question of adaptation to their new country. In the beginning, it was very difficult for the first generation to get used to their new life.

The following generations gradually found their place in French society. The question remains open today: Can we, 100 years later, continue to keep our Armenian identity? Can we have a double culture? Should we completely eliminate our origins to better integrate? It is a great challenge and answers may be different. However, it is certain that the Armenian Diaspora needs to ask the right questions to live in harmony where they are, while developing their ties and cooperation with Armenia.